Իրականում երբեք միայնակ չենք

Ի՞նչ կլիներ, եթե Իթենը նորից վնասվածք ստանար, երբ օգնող ոչ մեկը չլիներ կողքին:

Գաբրիել Շիոզավա
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Իթենը ճոճվում էր ճոճանակի վրա՝ ոտքերով հրումներ կատարելով: Նա ավելի ու ավելի բարձր էր սլանում: Քամին այնպիսի զգացողություն էր առաջացնում, ասես նա թռչում էր:

Ապա զանգը հնչեց: Իթենը հոգոց հանեց: Նա պատրաստ չէր դասամիջոցի ավարտին:

Երեխաները շարվեցին, որպեսզի վերադառնան դասարան: Իթենը թույլ տվեց, որ իր ճոճանակը կամաց-կամաց կանգ առնի: Ապա ցատկեց ճոճանակից, որ վերադառնա դասարան:

Բայց երբ Իթենը ոտքը դրեց գետնին, սուր ցավ զգաց: Նա ընկավ հողի վրա: Փորձեց կանգնել, սակայն նրա ոտքը կարծես այրվում էր: Ցավը շատ ուժեղ էր:

«Օգնեք»,- Բղավեց Իթենը: Արցունքները հոսեցին նրա այտերով: Երեխաները և ուսուցիչները վազելով օգնության հասան:

«Ի՞նչ է պատահել»,- հարցրեց ուսուցիչը:

«Ես կոտրել եմ ոտքս»:

Սա առաջին անգամը չէր, որ Իթենի ոսկորը կոտրվում էր: Դա նույնիսկ երկրորդ կամ երրորդ դեպքը չէր: Իթենն ուներ փխրուն ոսկորների հիվանդություն, որի պատճառով նրա ոսկորները հեշտությամբ կոտրվում էին: Նույնիսկ ճամփեզրից իջնելուց կամ ինչ-որ մեկին բախվելուց նա կարող էր կոտրել որևէ ոսկոր:

«Մենք կկանչենք քո ծնողներին, որպեսզի քեզ բժշկի տանեն»,- ասաց ուսուցիչը: «Ամեն ինչ լավ կլինի»:

Իթենն ուրախ էր, որ մարդիկ այնտեղ էին՝ իրեն օգնելու համար: Նրա ոտքը դեռ շատ էր ցավում, բայց նա գիտեր, որ ապահով կլինի:

Մայրն ու հայրը եկան դպրոց և Իթենին տարան բժշկի մոտ: Նրա ոտքին կապույտ գիպս դրեցին, ու նա գնաց տուն՝ հանգստանալու:

Ոտքի կոտրվածքի պատճառով Իթենը շատ ժամանակ անցկացրեց անկողնում: Նա շատ գրքեր կարդաց: Երբեմն ընկերները գալիս էին նրա հետ խաղեր խաղալու: Բայց, միևնույնն է, նա շատ ձանձրալի ժամեր էր ունենում:

Մի գիշեր Իթենն արթնացավ և չկարողացավ նորից քնել: Նա փորձում էր հանգստանալ, բայց չէր ստացվում: *Իսկ եթե ես ոսկոր կոտրեմ, ու ոչ ոք կողքիս չլինի՞, օրինակ՝ կեսգիշերին:* Մտածում էր Իթենը: Նրա սիրտը սկսեց արագ բաբախել: Նա վախ զգաց:

«Հայրիկ»,- Կանչեց Իթենը:

Հայրը վազեց Իթենի սենյակ: «Ի՞նչ է պատահել», -

«Ես վախենում եմ»,- ասաց Իթենը: «Ի՞նչ կլինի, եթե ես կոտրեմ ևս մեկ ոսկոր, և ոչ ոք այնտեղ չլինի, որ օգնի ինձ»:

Հայրիկը նստեց նրա կողքին: «Դրանք վախեցնող մտքեր են»,- ասաց նա: «Նույնիսկ երբ մենք փորձում ենք զգույշ և ապահով լինել, վատ բաներ, այնուամենայնիվ, կարող են պատահել: Բայց ինչ էլ որ լինի, Երկնային Հայրը հսկում է քեզ»:

«Ուրեմն դա նշանակում է, որ Նա միշտ ինձ հե՞տ է»,- Հարցրեց Իթենը:

«Ճիշտ այդպես»: Հայրը մեղմ գրկեց Իթենին:

Իթենը մտաբերեց, թե հայրը որքան արագ եկավ իրեն օգնելու: Նա գիտեր, որ հայրիկը սիրում է իրեն և միշտ ցանկանում է օգնել: Գուցե Երկնային Հայրը նույնպես այդպիսինն է:

Հաջորդ օրը Իթենը մի սուրբ գրություն կարդաց *Ընկեր* ամսագրում: Այնտեղ ասվում էր . «Ուրախ եղեք, և մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ, և ես կանգնելու եմ ձեր կողքին»:*

Իթենը իրեն հանգիստ և ապահով զգաց, երբ կարդաց սուրբ գրությունը, ճիշտ, ինչպես այն ժամանակ, երբ խոսում էր հայրիկի հետ: Նա գիտեր, որ դա Սուրբ Հոգին էր մխիթարում իրեն: Կարծես, նա կրկին գրկում էր հայրիկին:

Ես հավանաբար ավելի շատ ոսկորներ կկոտրեմ, մտածեց Իթենը, *սակայն, կարիք չկա վախենալու:* Նա գիտեր, որ իրականում երբեք միայնակ չէր լինի: ●

Կարդապետություն և Ուխտեր 68 . 6:



ՆԱՐՍԵՐԸ՝ ՍԻՄՈՆ ԲԻԼԹԵՐԻ

Ե՞րբ եք դուք զգացել Երկնային Հոր սերը:

ԸՆԿԵՐ ԺԱՄԱՆԱԿ